աճելու լինի դժգոհութիւնը, կառավարութիւնը ստիպուած կլինի յետ վերցնել իւր յետադիմական օրինագիծը:

Տաճկական կեանքից.

Церк. Вѣст.-*ի* № 46 *ում կարդում ենք.—*

Տաճկաստանում վերջին ժամանակներս առաջ եկան շատ նշանաւոր ներքին դէպքեր, որոնք մեծ վտանգ են սպառնում քրիստոնեայ աշխարհին: Համիսլամականութեան արբանեակը— *ահա այդ ապագայ սարսափներով հարուստ շարժման բնորոշ անունը: Ներկայ սուլթան Աբդուլ Համիդի սիստեմատիքական գործունէութեան շնորհիւ, որը ձգտում է վերածնել և միացնել մահմէդական ազգերը «Աստուծոյ փոխանորդի» դրօշակի տակ, ռուսական պետական կազմի խախտման, արևմտեան Եւրոպայի հովանաւոր վարմունքի շնորհիւ համիսլամականութիւնը զարթեց իւր երկարատև քնից և գաղտնի սրում է իւր սուսերը քրիստոնէից դէմ և պատրաստում յաղթական արշաւանքի ընդդէմ քրիստոնէութեան, ինչպէս այդ տեղի ունեցաւ բիւզանդական կայսրութեան դէմ միջին դարերում կատարուած տարերային արշաւանքի ժամանակ: Արդէն արտայայտւում է այդ արթնացման արդիւնքը հայերի և բուլղարների կոտորածով, որը տաճկաց կառավարութեան կողմից հետևողական մի փորձ է քրիստոնեաներին զրկելու այն իրաւունքներից, որոնցով նրանք օգտուել են բիւզանդական կայսրութեան անկման օրից:* Helinisme *թերթը, որ արթուն աչքով հսկում է քրիստոնէից շահերի պաշտպանութեանը արևելքում, հաստատելով համիսլամականութեան արթնանալը, նախազգուշացնում է գալիք վտանգից:*

«Ռուսական բանակի և նաւատորմի անսպասելի պարտութիւնները ասիական պետութիւնից, ասում է նա, որ հաղորդւում էր այստեղ, բորբոքեցին մուսուլմանների տաք երևակայութիւնը և վերածնեցին ամբողջ մահմէդական աշխարհի աշխարհակալական ոգին: Քաղաքակիրթ մարդկութեան սպառնացող դեղին վտանգին միանում է՝ նրանից ոչ պակաս սարսափելի կանաչ վտանգը հոգևոր միևնոյն կանաչ դրօշակի տակ համախմբուող 300 *միլլիոն մահմէդականներից: Այժմս կասկած չկայ, որ կը զօրանայ համիսլամականութեան Ասիայի և Աֆրիկայի քարոզիչների եռանդը՝ իրենց օջախ Ստամբուլի հետ միասին»:*

—Համիսլամականութիւնը զարթեց և նոր հաւատով գործի կպաւ յոյն-տաճկական պատերազմից յետոյ, երբ նորից ծնաւ հաւատ դէպի տաճկական ղէնքի ոյժը: Ինսուն և եօթ թուից այդ ուղղութեամբ գործունէութիւնը կատարւում էր և կատարւում է Կովկասի սահմաններում, որտեղ յայտնի գործում են Պօլսից եկած քարոզիչներ, իսկ մեր շահասէր բիւրօկրատիան դաշն է կապում նրանց հետ՝ ջնջելու մարդկային կեանքի և իրաւանց ձգտող տարրերը: Ինչպէս լրագիրները հաղորդում են, զինուած գնդեր է պատրաստում երկաթուղու գծերի պաշտպանութեան և խռովութիւնները զսպելու համար: Առաջարկ է եղել Գօրոդցևի խմբին «հայրենասէրների» շարքերի մէջ ընդունելու նաև Կովկասի թուրքերին և այժմ մի միայն նշանի մասին է խնդիրը: Ինչպէս յայտնի է, սև հարիւրեակները խաչագարդ նշան ունին, իսկ մահմէդականները խնդրել են, որ իրենց հայրենասիրական նշանը դրօշակ և կիսալուսին անեն: Շնորհաւորում ենք մեր բիւրօկրատ խելօք քաղաքագէտներին և մաղթում, որ նրանց այդ նշանաւոր հայրենասիրական քայլն «անփոշիման» լինի: Բայց կապրենք, կը տեսնենք:

ՄԱՐԴԻԿ՝ ՏԻՊԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ.

Յօդ. Ալէքսանդր Ամֆիթէատրովի.

(Շարունակութիւն *)

Երբ նոյն «Ռուս պանդուխտը» բանը հասցրեց «վարմիր կապերի», որով իբրև թէ փաթաթւում էին առողջ հայերը, որպէս զի եւրոպացիք նրանց թուրքերից վիրաւորուած ընդունէին, ես փորձեցի ձայն բարձրացնել զրպարտութեան այդ ամբողջ սիստեմի դէմ . . . . և իմ

*) Տես Արարատ 1905 թ. № 12: